

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մերի Հովսեփի Հովսեփյան

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՎԱՂ ԱԶԴԱՆՇՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԵՐԸ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ (ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Ը.00.06՝ «Միջազգային տնտեսագիտություն»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության
ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ - 2023

**Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանում**

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
ԳԱԼՈՅԱՆ ԴԻԱՆԱ ՈՈՐԵՐՏԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԴԱՎԻԹ

Տնտեսագիտության թեկնածու
ԷՐԻԿ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

**« ՀԱԱ Միջայել Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. օգոստոսի 29-ին
ժամը 14:00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ
ԲՈԿ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան 128

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. հուլիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր՝



S. U. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխարհաքաղաքական և տնտեսական ներկայիս զարգացումները, ճգնաժամերն ու անորոշությունների կուտակումները՝ ուրվագծում են նոր աշխարհակարգի եզրերը, որում կանխատեսելիության բարձրացման, ռիսկերի կառավարման և ճգնաժամերի կանխարգելման ուղիների վերաբերյալ ինչպես տեսական, այնպես էլ էմպիրիկ վերլուծությունները կարևոր և խիստ անհրաժեշտ են: Տարատեսակ ճգնաժամերի պատճառահետևանքային կապերի, էվոլյուցիայի և փոխանցումային ուղիների վերաբերյալ ակադեմիական գրականության մեջ բավականին հարուստ տեղեկատվություն է կուտակվել, սակայն դրանց առաջացման պատճառների համակարգային բացահայտումը և կանխատեսումը, արդյունավետ կանխարգելիչ միջոցառումների իրականացումը միայն վերջին մի քանի տասնամյակում է պատշաճ ուշադրության արժանացել: Հատկապես վերջին տարիներին, տնտեսագիտական միտքը կենտրոնացել է ինչպես ճգնաժամերի կանխարգելման, այնպես էլ կանխատեսելիության բարձրացման և դրանց վաղաժամ ազդանշան հնարավորությունների զարգացման վրա: Այս մասին են փաստում ինչպես Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և այլ միջազգային կառույցների հրապարակումները, այնպես էլ այն հանգամանքը, որ 2022թ. տնտեսագիտության ոլորտում Նոբելյան մրցանակը շնորհվել է հենց այս ուղղությամբ իրականացված հետազոտությանը՝ շեշտադրելով թեմայի կարևորությունը¹:

Չնայած ճգնաժամային դրսևորումները, փոխանցումային ուղիները ու տնտեսական անկայունությունների սկզբնավորման պատճառները տարբեր են, սակայն հետևանքները գրեթե նույնաբովանդակ են՝ գործազրկության աճ, բնակչության կենսամակարդակի անկում, արժույթային տատանումներ, մատակարարումների շղթաների խաթարումներ, գնաճ և այլն: Այս համատեսքում, երկրների կառավարությունների համար քաղաքականության մշակման արդյունավետ գործիքակազմի կարևորագույն մաս է դարձել ճգնաժամերի վաղաժամ ազդանշան համակարգերի (Այսուհետ՝ ՎԱՀ) ներդրումը և կիրառումը: Վերը նշված մարտահրավերները էլ ավելի են սրվում ինտեգրացիոն միավորումներում, որտեղ բացի առանձին երկրների տնտեսական քաղաքականության իրականացման հիմնախնդիրներից, առաջ են գալիս նաև միասնական տնտեսական քաղաքականության իրացման հանձնառություններ: Այս համատեսքում, որպես կանոն, ինտեգրացիոն միավորման կազմում գտնվող երկրները փորձում են մեկտեղել ջանքերը՝ ճգնաժամերի կանխարգելման, իսկ ի հայտ գալու պարագայում՝ հետևանքների մեղմման և հակաճգնաժամային միասնական կամ համակարգված քաղաքականություն իրականացնելու համար, մի պարզ տրամաբանությամբ, որ ինտեգրացիոն (այդ թվում՝ մաքսային միություն. ընդհանուր ձևավորված շուկաների առկայություն) միավորման կազմում գտնվող որևէ երկրում տեղի ունեցած ճգնաժամը ազդելու է միության մյուս երկրների վրա:

¹ Nobel Prize Organization. (2022). The Prize in Economic Sciences 2022: The laureates explained the central role of banks in financial crises. <https://www.nobelprize.org/uploads/2022/10/popular-economicsscienceprize2022.pdf> (last entered 03.05.2023)

Վերջին տարիներին համաշխարհային տնտեսությունում նկատելի է տնտեսական անկայունությունների և անորոշությունների զգալի կուտակումներ (միշտ չէ, որ դրանք ունենում են տնտեսական սկզբնապատճառ), ինչը նախադրյալներ է ստեղծում տնտեսական ճգնաժամերի առաջացման համար: Գլոբալիզացիայի ներկա փուլում այդ կուտակումների հետևանքներն էլ ավելի ցայտուն են դարձել: Ինչպես բնութագրում են միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունները, համաշխարհային տնտեսության առջև ծառայած ճգնաժամը շարունակվում է խորանալ: Տարածաշրջանում կամ գլոբալ մակարդակում աճող անկայունությունները անմիջապես խոցելի են դարձնում ինչպես համաշխարհային տնտեսական աճի ապահովումը, այնպես էլ երկրների խմբերի կամ ինտեգրացիոն միավորումների զարգացումը: Համավարակի տարածման, գերտերությունների «առևտրային պատերազմների», ռուս-ուկրաինական հակամարտության, պատժամիջոցների հետևանքներով վերջին տարիներին առաջացել են մատակարարման գլոբալ շղթաների խաթարումներ, վատթարացել համաշխարհային տնտեսական հեռանկարները, փոխարենը ուժեղացել են տնտեսական ռիսկերի հետևանքները: Այս իմաստով քաղաքականություն մշակողները «հանձնարարություն-տնային աշխատանք» ունեն անելու՝ կատարելագործելու և փոփոխելու տնտեսական անվտանգության ներկայիս համակարգերը՝ հիմքում ունենալով ճգնաժամի ի հայտ գալու հավանականությունը: Ըստ Համաշխարհային բանկի խմբի ուսումնասիրության՝ տարատեսակ ճգնաժամերը խարխլում են երկրների տնտեսական անվտանգության հիմքերը²:

Տնտեսական ճգնաժամերի հիմքում ընկած գործոնների վերաբերյալ բազմաթիվ տեսական ուսումնասիրությունները հիմնականում կենտրոնացված են մակրոտնտեսական անհավասարակշռության, ներքին կամ արտաքին գործոններով պայմանավորված ցնցումների վրա, սակայն դրանց խորքային պատճառները և կանխատեսման հնարավորությունները իրարամերժ քննարկումների տեղիք են տալիս: Այս համատեքստում անհրաժեշտություն է առաջանում հիմնավոր պատկերացում ձևավորել ճգնաժամերի ի հայտ գալու գործոնների, փոփոխականների շեմային մակարդակների, փոխանցումային ուղիների և հետևանքների, ինչպես նաև դրանց վաղաժամ կանխատեսման միջոցառումների շուրջ: Այսօրինակ ՎԱՀ մոդելները լայն կիրառություն են ստացել միջազգային կազմակերպությունների, առանձին երկրների կենտրոնական/ազգային բանկերի (ԿԲ) կամ քաղաքականություն մշակող այլ մարմինների կողմից: Դրանք իրենց արդյունավետությունը ապացուցել են ինչպես Ասիական երկրների ճգնաժամերի, այնպես էլ 2008թ.-ի համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակ:

Սույն առենախոսությունը մեկտեղում և ամփոփում է տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշան մոդելների ձևավորման «սերունդները», դրանց բովանդակային տարբերությունները և ընդհանուր միտումները, մեքենայական ուսուցման գործիքակազմի ներդրման հնարավորությունները և ուղենիշները, ճգնաժամերի ՎԱՀ-երի մշակման էվոլյուցիան, դրանց հիմնական մոտեցումներն ու հակասությունները, որոնց խորքային ուսումնասիրությունը կարող է գիտական հենք հանդիսանալ դրանց հետագա զարգացման և ԵԱՏՄ անդամ երկրների վրա տեղայնացնելու համար: Հաշվի

² Համաշխարհային բանկի խումբ, (2023). Համաշխարհային տնտեսական հեռանկարները, էջ. 27, ԱՄՆ, Վաշինգտոն, DOI:10.1586/978-1-4648-1906-3

առնելով ներկայիս գլոբալ մարտահրավերները, ճգնաժամերի կրկնման հաճախականությունը և անկայունություններով պայմանավորված շարունակական բացասական հետևանքները, ՎԱՀ մոդելները կարող են էական նշանակություն ունենալ քաղաքականություն մշակողների համար՝ թույլ տալով նրանց բացահայտել տնտեսության խոցելիությունները և, ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ՝ ճգնաժամի ռիսկերը նվազեցնելու համար: Այս համատեքստում թեմայի արդիականությունն անքատկելի է և բխում է մերօրյա տնտեսական մարտահրավերների հրամայականից:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտական թեմայի նպատակն է՝ բացահայտելով տարածաշրջանային մակարդակում ճգնաժամերի վաղ ազդանշանն հնարավորությունները, և գնահատելով վաղաժամ ազդանշանն համակարգի դերը ինտեգրացիոն գործընթացներում՝ մշակել ճգնաժամերի վաղ ազդանշանն համակարգ ԵԱՏՄ անդամ երկրների համար: Այդ նպատակին հասնելու համար հետազոտությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել համաշխարհային տնտեսության, այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական ճգնաժամերի առաջացման հիմնական պատճառները և փոխանցման ուղիները,
- բացահայտել ԵԱՏՄ անդամ երկրներում տնտեսական ճգնաժամերի առաջացման ներքին գործոնները և արտաքին սպառնալիքները,
- ուսումնասիրել տարբեր երկրների և ինտեգրացիոն միավորումների ճգնաժամերի վաղաժամ ազդանշանն առաջադեմ մոտեցումները,
- ընտրել և տեղյանացնել և հիմնավորել ԵԱՏՄ անդամ երկրների համար վաղաժամ ազդանշանն համակարգի մեթոդաբանությունը, դրա հիման վրա մշակել ԵԱՏՄ երկրների համար վաղաժամ ազդանշանն համակարգ,
- բացահայտել տարածաշրջանային մակարդակում տնտեսական հիմնա-կան/նշա-նա-կայի ցուցանիշների սահմանման հնարավորությունը և կիրառականությունը,
- ԵԱՏՄ երկրների համար իրականացնել տնտեսական ճգնաժամերի առաջացումը ազդանշող ցուցանիշների շեմային մակարդակների գնահատում,
- գնահատել մշակված վաղ ազդանշանն համակարգի ներդրման հնարավորությունները ԵԱՏՄ անդամ երկրներում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսություններն են և դրանց ինտեգրման գործընթացը, իսկ առարկան՝ տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշանն հնարավորությունները:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտաճանաչողական, վիճակագրական, համեմատական վերլուծության, գրաֆիկական մեկնաբանման, էկոնոմետրիկ մոդելավորման, փորձագիտական գնահատման մեթոդներ: Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, ԵԱՏՄ պայմանագրերով սահմանված կարգավորումները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի և միջազգային այլ կառույցների կողմից հրապարակված զեկույցները, հոդվածները և

աշխատանքային փաստաթղթերը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել վերոնշյալ մարմինների պաշտոնական կայքերը, դրանցում զետեղված պաշտոնական տեղեկագրերը, վիճակագրական տվյալների բազաները, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների պաշտոնական վիճակագրական տվյալները:

Ատենախոսության գիտական նորոպը: Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորոպը արտացոլող հիմնական դրույթներն են.

1. Մշակվել է ԵԱՏՄ անդամ երկրների 1994-2022 թթ. ճգնաժամերի մատրից, որն արտացոլում է միության յուրաքանչյուր երկրում արժույթային, բանկային, ֆինանսական, պարտքային և «կտրուկ կանգի» ճգնաժամերի ի հայտ գալու ժամանակագրությունը, դրանց միաժամանակյա դրսևորման և սինխրոնիզացման դեպքերը:
2. Պանելային վեկտոր-ավտորեգրեսիոն (VAR-vector autoregression) մոդելի միջոցով բացահայտվել է ԵԱՏՄ երկրների տնտեսության վրա ազդող արտաքին տնտեսական շուկերի փոխանցումային մեխանիզմը և գնահատվել դրանց ազդեցությունը Միության տնտեսության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա:
3. ԵԱՏՄ ինտեգրացիոն միավորման համար մշակվել է տնտեսական ճգնաժամերի վաղ ազդանշանն միագործոն (ազդանշանային մոտեցում) և բազմագործոն (լոգիթ մոդել) համակարգեր և գնահատվել է դրանց կիրառման հնարավորությունները ինտեգրացիոն գործընթացում:
4. Տնտեսամաթեմատիկական վերլուծության արդյունքում բացահայտվել է ճգնաժամերի բարձր կանխատեսելիությունն ապահովող նշանակալի փոփոխականների համախումբը, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների համար ճգնաժամի առաջացման առավել նշանակալի գործոնները (համաշխարհային տնտեսական աճ և նայթի գներ) և գնահատվել է դրանց ազդեցության չափը:
5. Ճգնաժամերի վաղաժամ ազդանշանն համակարգերի մոդելների կիրառման միջոցով գնահատվել է տնտեսական ճգնաժամերը ազդանշող նշանակալի փոփոխականների համար շեմային մակարդակներ, որի հիման վրա հաշվարկվել է նաև ճգնաժամի նախազգուշացման շեմային մեծությունները:
6. Մշակվել է տնտեսական կայունության գնահատման և մշտադիտարկման լրացուցիչ ցուցանիշների համախումբ, որը կարող է կիրառելի լինել ինչպես ինտեգրացիոն միավորման, այնպես էլ անդամ երկրների տնտեսական քաղաքականությունների իրացման գործընթացում:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ԵՏՀ կոլեգիայի կողմից՝ տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշանն համակարգի զարգացման և գործնական կիրառության գործընթացներում, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի և տնտեսական քաղաքականություն իրականացնող այլ մարմինների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են ուշագրավ լինել նաև ինտեգրացիոն տարբեր միավորումներում տնտեսական ՎԱՀ մոդելների մշակման առումով, ինչպես նաև այս ոլորտում հետազոտություններ իրականացնող մասնագետների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքի հիմնական դրույթները քննարկվել են ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի նիստերի ընթացքում, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում 2023թ. փետրվարի կյոր-սեղան քննարկմանը, «Վարլայ» միջազգային քննարկումների ակումբում 2022թ.-ի մարտին Տարածաշրջանային քաղաքական և տնտեսական զարգացումներին նվիրված քննարկմանը, «Օրբելի» հետազոտական կենտրոնում 2022թ. հոկտեմբեր ամսվա կյոր-սեղան քննարկմանը, Էրասմուս+ փոխանակային ծրագրի շրջանակում Վառնայի (Բուլղարիա) տնտեսագիտական համալսարանում, «ԵՄ և ԵԱՏՄ հակամարտությունների և մրցակցության, կոնվերգենցիայի և համագործակցություն» խորագրով Ժան Մոնե Էրասմուսյան ծրագրի ամառային դպրոցի շրջանակում, ԵՏՀ փորձագետների հետ:

Հետազոտության առանձին արդյունքներ ներկայացվել է ԵՏՀ կոլեգիային՝ ուսումնասիրության և գործնական կիրառության նպատակով:

Աշխատանքի հիմնական արդյունքներն ամփոփվել են 7 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլոբսներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Տեքստը կազմում է 146 էջ՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **առաջաբանում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Տնտեսական ճգնաժամերը և դրանց վաղաժամ ազդանշանն փեսամեթոդական հիմքերը»** գլխում ներկայացվել է անկայունությունների և տնտեսական ճգնաժամերի, դրանց վաղաժամ ազդանշանն համակարգերի համեմատական բնութագիրը, մեթոդական մոտեցումները, մշակման էվոլյուցիան և «սերունդները», ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրներում անկայունացումից ի վեր տեղի ունեցած անկայունությունների ժամանակագրական վերլուծությունը:

Սույն գլխում ԵԱՏՄ անդամ երկրների վերջին 30 տարիների տնտեսական ճգնաժամերի ժամանակագրությունը հեղինակը ներկայացրել է 7 փուլերով: Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ բոլոր երկրների վերջին 30 տարվա տնտեսական անկայունությունների և ճգնաժամերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կան ժամանակահատվածներ, երբ անկում է նկատվել Միության անդամ բոլոր երկրներում, այդպիսիք են՝ հետխորհրդային տարիների տնտեսական կառուցակարգի փոփոխությունների տարիները՝ 1991-1997թթ., համաշխարհային ֆինանսական ճգնաժամի տարիները՝ 2007-2009թթ., ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների և նավթի համաշխարհային գների անկումը 2014թ., կորոնավիրուսային համավարակով պայմանավորված ճգնաժամը 2020թ.: Բացի նշված ժամանակահատվածներից, երբ

տնտեսական ցիկերը Միության երկրների համար գրեթե համընկել են, եղել են նաև տնտեսական ճգնաժամային դրսևորումներ առանձին երկրներում, որը հիմնականում պայմանավորված է խոցելիությունների և արտաքին սպառնալիքների նկատմամբ առանձին երկրների դիմադրողականության տարբերություններով: Անկախությունից ի վեր ԵԱՏՄ անդամ երկրներում գրանցված ճգնաժամերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրասիական ինտեգրացիոն միության անդամ երկրներում արձանագրվել են **արժութային, բանկային, պարտքային, պարտքի վերակառուցման, «կտրուկ կանգի» ճգնաժամեր:** Թեև ԵԱՏՄ անդամ երկրներն ունեն տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ, սակայն տնտեսական ցիկերն ունեն որոշակի ժամանակային համընկնումներ, ինչը հիմք է ստեղծում տնտեսական ճգնաժամերի արդյունավետ ՎԱՀ մոդելներ մշակելու ընդհանուր մոտեցումների համար:

Աղյուսակ 1. Անկախությունից ի վեր ԵԱՏՄ անդամ երկրներում արձանագրված ճգնաժամերի մատրից³

| | 1994 | 1995 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2002 | 2008 | 2009 | 2011 | 2014 | 2015 | 2020 | 2022 |
|-----------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|
| Հայաստան | x | | | | | | x | | x | | | x | x | |
| Քելառուս | | x | x | | | | | | x | x | | x | x | x |
| Ռուսաստան | | x | | օգ | օգ | օգ | | x | | | x | | x | x |
| Ղազախստան | | | | | x | | | x | x | | | x | x | |
| Ղրղզստան | | x | x | | | | | | x | | | x | x | |

ԱՄՀ-ի, ՀԲ-ի փորձագետների և տեղացի տնտեսագետների գնահատականները ուսումնասիրելով և վերլուծելով սեփական հաշվարկները, հեղինակը արձանագրել է, որ անկախությունից ի վեր ԵԱՏՄ բոլոր երկրներում տեղի են ունեցել արժութային և բանկային ու «կտրուկ կանգի» ճգնաժամեր, մինչդեռ պարտքային ճգնաժամ եղել է միայն ՌԴ-ում 1998թ.: Պարտքի վերակառուցման ճգնաժամեր են տեղի ունեցել ՌԴ-ում (2000թ.) և ՀՀ-ում (2002թ.):

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսական ցնցումների փոխանցումային մեխանիզմն ու ԵԱՏՄ ճգնաժամերի վաղաժամ ազդանշանն համակարգը» գլխում, հեղինակը ուսումնասիրել է ԵԱՏՄ անդամ երկրների մակրոտնտեսական կայունությունը արտացոլող ցուցանիշների համախումբը և ԵԱՏՄ երկրների ներքին և արտաքին տնտեսական հաշվեկշռվածության իրավիճակները: Դիտարկվել է նաև ԵԱՏՄ-ի մասին Պայմանագրով սահմանված կայունության ցուցանիշների փոփոխությունները և ԵԱՏՄ-ի կազմավերումից ի վեր սահմանված շեմային մակարդակներից շեղումները: Սույն գլխում վեր են հանվել ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսություններ ներթափանցող

³ Աղյուսակը մշակվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով Լաևենի և Վալենտինայի Համակարգային բանկային ճգնաժամերի տվյալների բազա II-ի և բաց կողով տվյալների բազայի վրա:


Արժութային
 Բանկային
 Պարտքային
 Պարտքի վերակառուցում
 «Կտրուկ կանգի»

տնտեսական շուկերի աղբյուրները և դրանց փոխանցումային ուղիները, կառուցվել է ԵԱՏՄ մակրոտնտեսական կայունության ռիսկերի մատրից 2016, 2019-2021թթ.-ի ԵՏՀ տվյալների հիման վրա: Էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ իրականացվել է ՎԱՀ բազմագործոն մոդելային վերլուծություն:

ԵԱՏՄ երկրների մակրոտնտեսական կայունության ուսումնասիրության համար հաջորդիվ ներկայացվել է ԵԱՏՄ Պայմանագրով սահմանված մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունների դինամիկան Միության անդամ երկրներում, հատկապես ԵԱՏՄ կազմավորումից ի վեր⁴: Դրանք են՝

1. **Գնաճի մակարդակը** (սպառողական գների համաթիվ): Միության անդամ բոլոր երկրներում 2022թ. դեկտեմբերին փաստացի գնաճի արժեքները եղել են պայմանագրով սահմանված հաշվարկային արժեքի սահմաններում (13,3% մակարդակում, որն ամենաբարձր արժեքն է 2015թ. ի վեր):

2015-2022թթ. գնաճի մակարդակների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ԵԱՏՄ անդամ երկրներից ՌԴ-ն (2015-2016թթ.), Բելառուսը (2015-2016թթ., 2018թ.) Ղազախստանը (2015-2016թթ., 2022թ.), Ղրղզստանը (2020թ., 2022թ.) հաճախակի գերազանցել են ԵԱՏՄ պայմանագրով նախանշված մակարդակը, և հատկապես այդ շեղումները տեղի են ունեցել ճգնաժամային կամ անկայունությունների տարիներին: ԵԱՏՄ անդամ երկրներից միայն ՀՀ-ն երբևէ չի շեղվել նշված մակարդակից: Միության անդամ բոլոր երկրներում 2021թ. դեկտեմբերին փաստացի գնաճի մակարդակները եղել են պայմանագրով սահմանված հաշվարկային արժեքի սահմաններում, իսկ արդեն 2022թ. այն կազմել է 13.3% (Ղրղզստանը և Ղազախստանը հաշվարկային արժեքից շեղվել են)⁵ գերազանցելով նաև 2021թ. ցուցանիշը:



Գծապատկեր 1: ԵԱՏՄ անդամ երկրներում գնաճի մակարդակը և թույլատրելի շեղումը ԵԱՏՄ պայմանագրի⁵


⁴ ԵԱՏՄ-ի մասին Պայմանագիր, 2014, ուժի մեջ է մտել 2015թ.-ի հունվարի 1-ից <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95203> (վերջին մուտք՝ 01.02.2023)

⁵ Գծապատկերներ 1-3-ը կազմվել է հեղինակի կողմից՝ ԵՏՀ կայքի տվյալների և ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի հիման վրա, <https://rb.gy/3w053> (վերջին մուտք՝ 01.02.2023)

Հատկանշական է, որ վերջին 20 տարիների ընթացքում ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներում նկատելի են գնաճի մակարդակների կտրուկ տատանումներ հատկապես ճգնաժամային ժամանակահատվածներում: Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ-ում գների ամենաբարձր մակարդակն արձանագրվել է 2008թ., 2016թ., 2022թ., իսկ ամենացածր մակարդակը՝ 2018թ. 3.2%: Այդ թվում՝ 2022թ. երկրների մեծ մասում արդյունաբերական արտադրանքի գները զագաթնակետին են հասել 2022թ. մարտին, իսկ սպառողական գները՝ ապրիլին:

2. **Պետական կառավարման հատվածի պարտքը:** 2022թ. հունիսի դրությամբ ՀՀ-ն (56.4%) և Ղրղզստանը (56%) հատել են պայմանագրով սահմանված 50%-ի շեմը: Նկատենք, որ այս շեմը բավականին ցածր է ՌԴ-ում և Ղազախստանում, իսկ Բելառուսում միջինում տատանվում է 35-40%-ի սահմաններում:

Վերջին 2 տասնամյակներում կառավարության պարտք/ՀՆԱ-ի դինամիկայից պարզ է դառնում, որ ԵԱՏՄ երկրներից ՌԴ-ն, Ղազախստանը և Բելառուսը 50%-ի շեմը չեն գերազանցում, Ղրղզստանը մինչև 2008թ. էականորեն նվազեցրել է կառավարության պարտքը, սակայն 2008թ. ճգնաժամից հետո այն սկսել է պարբերաբար գերազանցել այդ մակարդակը: 2022թ. հուլիսի 1-ի դրությամբ ԵԱՏՄ անդամ երկրների ընդհանուր պետական պարտքն աճել է 28%-ով (2021թ. նույն օրվա համեմատ) և հասել 438,8 մլրդ ԱՄՆ դոլարի:




Փժապատկեր 2: ԵԱՏՄ անդամ երկրների կառավարության պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ, 2000-2021թթ.⁶

ԵԱՏՄ պետական պարտքի աճը պայմանավորված է ՌԴ-ի ներքին պարտքի համաչափ աճով՝ 213,6 մլրդ ԱՄՆ դոլարից մինչև 311,7 մլրդ ԱՄՆ դոլար: Փաստացի, ՀՀ-ում, Ղրղզստանում և ՌԴ-ում 2022թ. ՀՆԱ-ի նկատմամբ պարտքը նվազել է, որի հիմնական պատճառներից մեկն ազգային արժույթի ամրապնդումն էր: Իրական ՀՆԱ-ի աճը նպաստել է Ղազախստանի ՀՆԱ-ի նկատմամբ ընդհանուր պետական պարտքի նվազմանը: ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներում ընդհանուր միտումը եղել է իրական տոկոսադրույքի և բյուջեի առաջնային պակասուրդի նվազումը, ինչն էական

⁶ ՏԵՍ, նույն տեղում:

ազդեցություն է ունեցել Ղազախստանի, Ղրղզստանի և Ռ-ի ընդհանուր պարտքի մակարդակի կրճատման վրա:

3. **Պետական բյուջեի պակասուրդը:** ԵԱՏՄ երկրները միմյանցից էականորեն տարբերվում են համախմբված պետական բյուջեի պակասուրդի դինամիկայով. Բելառուսը ունի հավելուրդային բյուջե, Ռ-ն վերջին տարիներին ևս ուներ հավելուրդային բյուջե բացառությամբ 2020թ., իսկ մյուսները հիմնականում ունեն պակասուրդային բյուջե: Համախմբված ընդհանուր պետական բյուջեի տարեկան պակասուրդը/հավելուրդը ըստ պայմանագրի սահմանված է ՀՆԱ-ի 3%-ի չափով:



Գծապատկեր 3: ԵԱՏՄ անդամ երկրների պետական բյուջեների պակասուրդը, 2015-2021թթ., % ԵԱՏՄ սահմանաչափ⁷

2021թ. այս ցուցանիշը խախտել են ՀՀ-ն և Ղազախստանը, իսկ արդեն 2022թ. հունիսի վերջին Պայմանագրով սահմանված պակասուրդի մակարդակի առումով ՀՆԱ-ի 3% չափանիշը չի գերազանցվել ոչ մի անդամ պետության կողմից: 2022թ. հարկաբյուջետային հաշվեկշռի բարելավումը հիմնականում պայմանավորված էր հարկային եկամուտների աճով, էներգետիկ ապրանքների համաշխարհային գների բարձրացմամբ, առանձին երկրների տնտեսական բարենպաստ զարգացումներով:

ԵԱՏՄ մակրոտնտեսական կայունության նկատմամբ արտաքին ռիսկերը մշտապես գտնվում են նաև ԵԱՏՄ խորհրդի ուշադրության կենտրոնում: Յուրաքանչյուր տարի ԵՏՀ-ի կողմից մշակվում և հրապարակվում է վերլուծական զեկույց, որտեղ բազմաբնույթ ուսումնասիրությունների շրջանակներում ներկայացվում է նաև ԵԱՏՄ մակրոտնտեսական կայությունության տվյալ տարվա հիմնական ռիսկերը, ինչպես նաև դրանց ազդեցության ուղիներն ու չափը⁸: Այդ առանձին վերլուծությունների համադրման

⁷ ՏԵՍ, Նույն տեղում:

⁸ ЕЭК, Архив годового доклада,

https://eec.eaunion.org/comission/department/dep_makroec_pol/makroekonomicheskie-doklady/arkhiv-godovogo-doklada_ohp

և տարիների փոփոխության վերլուծությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել ռիսկերի դինամիկայի և տևողականության վերաբերյալ (Աղյուսակ 2):

Հիմնվելով ԵԱՏՄ անդամ երկրների հիմնական ցուցանիշների վերլուծությունների վրա, ինչպես նաև հաշվի առնելով ԵԱՏՄ տնտեսական առանձնահատկությունները և շուկերի փոխանցման մեխանիզմի միջազգային և ԵԱՏՄ երկրներին վերաբերող ուսումնասիրությունները՝ շուկերի փոխանցման մեխանիզմները ուսումնասիրվել են ստորև ներկայացված ընդհանուր սխեմայի շրջանակներում (Գծանկար 1):

Աղյուսակ 2: ԵԱՏՄ մակրոտնտեսական կայունության ռիսկերի մատրից⁹


| Ռիսկի աղբյուրը | Իրականացման հավանականությունը | | | |
|---|---|--------|--------|--------|
| | 2016 | 2019 | 2020 | 2021 |
| | Ֆինանսական և ոլորտային պատժամիջոցների սրացում | Yellow | Red | Yellow |
| Ներդրումային ակտիվության մակարդակ | Red | Red | Red | Red |
| Կապիտալի հոսքի անկայունություն | Red | Grey | Red | Red |
| Դրամական փոխանցումների ծավալների նվազում | Green | Grey | Yellow | Yellow |
| Պարտքի կայունությունը և արտաքին պարտքի կառուցվածքը | Red | Yellow | Red | Red |
| Վարկային ռիսկերի նյութականացում | Grey | Grey | Yellow | Yellow |
| Աշխատուժի առաջարկի նվազում, քնակցության ծերացում | Grey | Red | Red | Yellow |
| Հումքային ապրանքների գների անկայունություն | Green | Red | Yellow | Yellow |
| Կորոնավիրոս | Grey | Red | Yellow | Yellow |
| Գնաճային ռիսկերը | Grey | Grey | Red | Red |
| Համաշխարհային տնտեսության մեջ պրոտեկցիոնիզմի ուժեղացում | Red | Red | Yellow | Yellow |
| Համաշխարհային տնտեսության աճի դանդաղում | Red | Yellow | Grey | Yellow |
| Համաշխարհային ֆինանսական շուկաներում ռիսկերի կոտակում | Red | Red | Grey | Red |
| Տնտեսական դիվերսիֆիկացիայի աստիճանի պահպանում | Grey | Grey | Red | Red |
| | | | | |
| | Ռիսկը բարձր է | | | |
| | Ռիսկը միջին է | | | |
| | Ռիսկը ցածր է | | | |
| | Գնահատականները քաջակալում են | | | |

Որպես ԵԱՏՄ շուկերի փոխանցման աղբյուրներ առանձնացվել են ազդեցություն ունեցող 3 հիմնական աղբյուրները՝ **համաշխարհային տնտեսական աճ, միջազգային ֆոնդային շուկայի անկայունություն և միջազգային հումքային շուկա** (նավթի, մետաղների և պարենի միջազգային գներ): ԵԱՏՄ տնտեսություններին այդ շուկերը փոխանցվում են փոխարժեքի, արտաքին առևտրի, օտարերկրյա ներդրումների, պետական բյուջեի ցուցանիշների և գնաճի ուղիներով: Հեղինակի կողմից մշակված

⁹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով 2016, 2019, 2020, 2021 թվականների զեկույցները

համակարգում շուկերի ազդեցությունը դրսևորվում է ԵԱՏՄ տնտեսական աճի, ինչպես նաև երկրների պետական բյուջեների վրա՝ ներգործելով պարտքի բեռի ավելացման վրա:

Հաշվի առնելով ԵԱՏՄ երկրների մի մասին հումքային ուղղվածությունը, համաշխարհային տնտեսության տատանումների ազդեցությունը թուլացված է փոխանցվում այս երկրներին:




Գծանկար 1: ԵԱՏՄ արտաքին շուկերի փոխանցման մեխանիզմի ընդհանուր սխեման¹⁰

Այսպես, իրականացված էմպիրիկ գնահատումները ցույց են տալիս, որ համաշխարհային ՀՆԱ աճի 2 ստանդարտ շեղման չափով շուկը (6.4%-ային կետ) արդեն 2-րդ եռամսյակում հանգեցնում է միջինում ԵԱՏՄ երկրների տնտեսական աճի 1,2% արագացման: Դրական ազդեցությունը ԵԱՏՄ տնտեսությունը շարունակում է զգալ հաջորդող 5 եռամսյակներում, և այն շարունակաբար մարում է: Ի տարբերություն համաշխարհային ՀՆԱ-ի աճի, նավթի գների համանման դրական շուկի ազդեցությունն ավելի արագ է փոխանցվում ԵԱՏՄ տարածաշրջան, և արդեն իսկ 1-ին եռամսյակում նկատվում է 1,16 տոկոսային կետով տնտեսական աճի արագացում, որը իր առավելագույն ազդեցության մակարդակին հասնում է 2-րդ եռամսյակում՝ կազմելով 1,21 տոկոսային կետ: Գրեթե նույն ազդեցությունն է արձանագրվել պարենի և մետաղների գների շուկի ստանդարտ շեղման համար: Սա մի կողմից բացատրվում է այս երկու ցուցանիշների կոռելյացվածության մակարդակով, մյուս կողմից ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական կառուցվածքում ունեցած համամասնություններով: Այս երկու ցուցանիշների միջև կոռելյացիայի գործակիցը կազմում է 0,9, հետևաբար դիտարկվող ժամանակահատվածում դրանք ունեցել են գրեթե նույն վարքագիծը, ինչն էլ

¹⁰ Գծանկարը կառուցվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումները, ինչպես նաև էմպիրիկ գնահատման արդյունքները:

ընտրագրում է նույնանման ազդեցությունը այս և գրեթե բոլոր ցուցանիշների պարագայում: Մյուս կողմից, ԵԱՏՄ անդամ երկրները միասին ապահովում են համաշխարհային գյուղատնտեսական արտադրանքի 5,5%-ը, որի զգալի մասը բաժին է ընկնում հացահատիկի արտադրությանը և արտահանմանը: Ինչ վերաբերվում է համաշխարհային մետաղների արդյունահանմանը և արտահանմանը, ապա ԵԱՏՄ-ին բաժին է ընկնում համաշխարհային մետաղների արտադրության 4.3 %-ը, որն էլ հիմք է ստեղծում արտաքին այս շուկերի ազդեցության հետևանքով ԵԱՏՄ ՀՆԱ պերմանենտ աճի համար, ի տարբերություն մնացած շուկերի ազդեցության, որոնք դիտարկվող ժամանակահատվածի վերջում մարում են¹¹:



Գծապատկեր 4: Արտաքին շուկերի ազդեցությունը ԵԱՏՄ ՀՆԱ աճի վրա¹²

Կատարված էկոնոմետրիկ վերլուծությամբ պարզվել է, որ ԵԱՏՄ տնտեսության համար էական են ուսումնասիրված բոլոր աղբյուրներից եկող տնտեսական շուկերը, որոնց համար ընդգծվել են փոխանցումային ուղիների տարբերությունները: Միևնույն ժամանակ, և՛ հումքային ակտիվների գների, և՛ միջազգային ֆինանսական շուկայի պայմանների շուկերը ներգործում են ուսումնասիրված բոլոր ուղիներով, հստակ փոխանցումային մեխանիզմով: Բոլոր շուկերը ի վերջո ներազդում են տնտեսական աճի տեմպի, ինչպես նաև պետական հատվածի խոցելիություններն արտացոլող՝ կառավարության պարտքի բեռի վրա:

ԵԱՏՄ անդամ երկրների համար ՎԱՀ-ի մշակման հիմքում դրվել են ինչպես բազմազործոն՝ էկոնոմետրիկ յոգիք մոդելների կիրառումը, այնպես էլ միագործոն՝ ազդանշանային մեթոդի միջոցով ֆինանսական ճգնաժամերի 5 տեսակների համար փոփոխականների շեմային ցուցանիշների վեր հանումը:

Լոգիք մոդելի կիրառման արդյունքում բացահայտվել է Միության **ՀՆԱ-ի անկման հանգեցնող նշանակալի արտաձին գործոնները**: Այդ նպատակով, դիտարկվել են արտաձին բոլոր այն գործոնները, որոնց ազդեցությունը և փոխանցման ուղիները բացահայտված են վեկտոր-ավտոռեգրեսիոն վերլուծությամբ: 145 փոփոխականների

¹¹ Драгун Н.П., Курбнева И.Ю. “СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ЧЕРНОЙ МЕТАЛЛУРГИИ В СТРАНАХ ЕАЭС”. Литье и металлургия. 2016;(1): 76-81.

¹² Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ պանելային վեկտոր-ավտոռեգրեսիոն մոդելի արդյունքների հիման վրա:

տարեկան պանելային տվյալների հիման վրա իրականացված գնահատումների արդյունքում բացահայտվել է, որ դիտարկված գործոններից **համաշխարհային տնտեսական աճը և նավթի գինը** վիճակագրորեն նշանակալի կերպով ազդում են Միության անդամ երկրներում ռեցեսիայի հավանականության վրա (ռեցեսիան տարվա ընթացքում բացասական աճն է): Հատկանշական է, որ մեր կողմից բացահայտված գործոնները նույնական են ԵԱՀԲ հետազոտությամբ բացահայտված գործոններին¹³: Համաձայն լոգիթ մոդելով ստացված գնահատականների, համաշխարհային տնտեսական աճի 1%-ային կետով աճը այլ հավասար պայմաններում նվազեցնում է ռեցեսիայի հավանականությունը 8.1%-ով, իսկ նավթի գնի 1 դոլարով բարձրացումը՝ 3.8%-ով: Ստացված գնահատականը, ըստ էության, ամբողջացնում է նախորդ բաժնում կատարված վերլուծությունը, որտեղ Vector AutoRegression մոդելների միջոցով բացահայտվել էր նավթի գնի և համաշխարհային տնտեսական աճի ազդեցությունների փոխանցման ուղիները:

Առենախտության երրորդ՝ **«ԵԱՄՄ վաղաժամ ազդանշանն համակարգի արդյունքները և դերը ինպեզրացիոն գործընթացում»** գլխում ներկայացվել է ինտեգրացիոն միավորումներում ՎԱՀ մոդելների կիրառման հնարավորությունները և առկա իրավիճակը, գնահատվել է ԵԱՄՄ անդամ երկրների համար ՎԱՀ միագործոն՝ ազդանշանային մոտեցման հնարավորությունները, ստացվել են 18 փոփոխականների համար ճգնաժամների ազդանշանն շեմային մակարդակներ, որոնց հիման վրա դիտարկվել է նաև ամենաբարձր արդյունք ցուցաբերած փոփոխականների վերջին 4 տարիների դինամիկան:

Տնտեսական ճգնաժամների վաղ ազդանշանն միագործոն համակարգի մշակման համար մեր կողմից օգտագործված մեթոդը Կամինսկու, Լիստոնոյի և Ռեյնհարթի կողմից ներդրված ազդանշանային մոտեցումն է, որում հեղինակները հաշվի են առնում տնտեսական խոցելիությունների շեմային ցուցանիշները և վերաժում դրանք երկուական ազդանշանների. ճգնաժամին նախորդող ժամանակաշրջանի յուրաքանչյուր փոփոխականի միջին մակարդակը (կամ աճը) համեմատվում է կայուն ժամանակաշրջանի հետ¹⁴: ԵԱՄՄ անդամ երկրների ճգնաժամների վաղաժամ ազդանշանն միագործոն համակարգը հնարավորություն է տալիս ազդանշանային մոտեցմամբ բացահայտել տնտեսական փոփոխականների համակարգը և դրանց համար սահմանել շեմային մակարդակներ, որոնց խախտման պարագայում ի հայտ է գալիս ճգնաժամի իրականանալու հավանականությունը: Այս նպատակով ուսումնասիրվել է ԵԱՄՄ անդամ երկրների համար 1993-2021թթ. 22 փոփոխականների վարքագիծը 5 տեսակի ֆինանսական ճգնաժամների (արժույթային, բանկային, պարտքային, կտրուկ կանգի), դրանց համախմբված ինդեքսի, ինչպես նաև ռեցեսիայի նկատմամբ (ընդհանուր առմամբ ստացվել է 132 ազդանշան): Այնուհետև առանձնացվել են 18-19 ցուցանիշներ, որոնք կարող են կանխատեսել տնտեսության մեջ ճգնաժամային

¹³ EA3B, 2019, Каналы и масштаб влияния внешних шоков на экономики стран-участниц ЕАБР, <https://eabr.org/analytics/special-reports/kanal-y-i-masshtab-vliyaniya-vneshnikh-shokov-na-ekonomiki-stran-uchastnits-eabr/>

¹⁴ Graciela Kaminsky, Saul Lizondo, Carmen M. Reinhart – Leading indicators of currency crises, IMF staff papers, Vol. 45, No. 1, March 1998

ժամանակաշրջանների սկիզբը: Արդյունքում, առաջնային վիճակագրական մշակման ավարտից հետո ընտրվել են 108 հավաքագրված ցուցանիշներ, որոնք ազդարարում են հետագա ժամանակաշրջաններում ճգնաժամի սկիզբը:

Ամփոփելով ստացված շուրջ 110 շարքերի ուսումնասիրությունը հեղինակը եզրակացնում է, ընտրված 18 փոփոխականներից 80-90%-ը ի վիճակի են կանխատեսել ճգնաժամերի տարբեր տեսակներ, իսկ դրանց որոշ մասը նաև կարողանում է կանխատեսելի լինել բոլոր տեսակի ճգնաժամերի համար միաժամանակ և տնտեսական կայունության ապահովման համար ուղենիշային կարևոր ցուցիչներ կարող են համարվել:

Աղյուսակ 3. Ազդանշային մոտեցման ՎԱՀ համակարգի արդյունքները ըստ ճգնաժամերի տեսակների¹⁵

| Փոփոխական | Միջին | Մեղիան | Ազդանշանի ուղղությունը | Արտության ճգնաժամ | | Բանկային ճգնաժամ | | Պարտքային ճգնաժամ | | Ֆինանսական ճգնաժամ | | Ոնցեսիա | | «Կարուկ կազմ» | |
|--|-------|--------|------------------------|-----------------------|----------------|-----------------------|----------------|-----------------------|----------------|-----------------------|----------------|-----------------------|----------------|-----------------------|----------------|
| | | | | Արևմտադարձան գրեմիլից | Չեմ/հատված շին | Արևմտադարձան գրեմիլից | Չեմ/հատված շին | Արևմտադարձան գրեմիլից | Չեմ/հատված շին | Արևմտադարձան գրեմիլից | Չեմ/հատված շին | Արևմտադարձան գրեմիլից | Չեմ/հատված շին | Արևմտադարձան գրեմիլից | Չեմ/հատված շին |
| Հաճախարարային աճ | 3,5 | 3,5 | < | 0,43 | 3,4 | 0,35 | 2,9 | 0,02 | (0,1) | 0,02 | (0,1) | 0,07 | 2,0 | 0,02 | (0,1) |
| Կառավարության ընդհանուր նկատմաներ/ՀՆԱ | 28,5 | 27,8 | < | 0,59 | 26,2 | 0,68 | 33,8 | 0,75 | 35,3 | 0,89 | 35,3 | 0,70 | 32,7 | 0,75 | 35,3 |
| Ընթացիկ հաշվի մնացորդ/ՀՆԱ | (3,7) | (3,4) | < | 0,47 | (15,7) | 1,00 | - | 0,79 | (3,8) | 0,96 | 4,8 | 0,87 | 5,0 | 0,79 | (3,8) |
| Կառավարության ընդհանուր համախառն պարտք/ՀՆԱ | 37,5 | 36,3 | > | 0,36 | 10,2 | 1,30 | - | 1,25 | - | 1,03 | 55,9 | 1,09 | - | 1,5 | - |
| Կառավարության ընդհանուր ցուցիչի հաշվեկշիռ/ՀՆԱ | (2,2) | (2,1) | < | 0,04 | (13,5) | 0,23 | (7,4) | 0,38 | (2,9) | 0,36 | (6,3) | 0,63 | (2,9) | 0,38 | (2,9) |
| Համախառն ազգային խնայողություններ/ՀՆԱ | 20,4 | 21,9 | < | 0,13 | 2,1 | 0,18 | 11,9 | 0,75 | 27,0 | 0,81 | 25,8 | 0,26 | 2,1 | 0,75 | 27,0 |
| Գնաճ, % | 147,1 | 8,4 | > | 1,68 | - | 1,15 | - | 0,47 | 4,9 | 1,03 | 23,4 | 1,54 | - | 0,47 | 4,9 |
| Կառավարության ընդհանուր ծախսեր/ՀՆԱ | 31,9 | 32,0 | < | 0,81 | 37,9 | 0,89 | 39,7 | 0,88 | 39,3 | 0,92 | 32,5 | 0,91 | 41,8 | 0,88 | 39,3 |
| Ընդհանուր ներդրումներ/ՀՆԱ | 24,3 | 24,4 | < | 0,52 | 19,5 | 0,18 | 18,2 | 0,81 | 18,7 | 0,71 | 22,4 | 0,42 | 19,5 | 0,81 | 18,7 |
| Կառավարության ընդհանուր կառավարման հաշվեկշիռ/ՀՆԱ | 0,4 | 0,4 | > | 0,91 | (0,6) | - | - | 0,14 | (3,1) | 0,51 | (0,1) | 0,43 | (2,2) | 0,14 | (3,1) |
| Գործազրկություն, % | 9,6 | 7,5 | > | 0,86 | 5,7 | 2,39 | - | 1,22 | - | 1,25 | 5,7 | 1,12 | - | 1,22 | - |
| Սպախների արտահանման ծավալը, % | 7,3 | 6,1 | < | 0,52 | (14,3) | 0,80 | 7,3 | 0,29 | 0,2 | 0,38 | (10,1) | 0,38 | (1,5) | 0,29 | 0,2 |
| Ազդանշանի ներմուծման ծավալը | 7,5 | 8,0 | < | 0,65 | (14,8) | 0,69 | 15,2 | 0,05 | (17,5) | 0,22 | (7,0) | 0,31 | (2,6) | 0,05 | (17,5) |
| Սվանդների տոկոսադրույք (%) | 13,0 | 8,2 | > | 0,48 | 4,0 | 0,84 | 17,1 | 0,68 | 3,8 | 0,93 | 19,9 | 0,48 | 2,3 | 0,68 | 3,8 |
| Տոկոսադրույքի սիրիդ (վարկի տոկոսադրույք-ավանդի տոկոսադրույք, % | 13,4 | 10,4 | > | 1,00 | - | 2,03 | - | 1,27 | - | 0,79 | 1,0 | 1,00 | - | 1,27 | - |
| Վարկավորման տոկոսադրույք (%) | 26,5 | 18,6 | > | 1,00 | - | 2,15 | - | 1,04 | - | 0,94 | 10,1 | 0,48 | 7,2 | 1,81 | - |
| Իրական տոկոսադրույք (%) | 3,4 | 6,1 | > | 0,35 | (7,2) | 0,91 | 19,6 | 0,92 | 21,7 | 0,87 | 10,3 | - | (63,9) | 0,92 | 21,7 |
| Նավթի գներ | 51,3 | 50,8 | < | 0,89 | 97,0 | 0,86 | 96,2 | 0,64 | 61,8 | 0,57 | 19,2 | 0,09 | 17,2 | 0,64 | 61,8 |

¹⁵ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՎԱՀ միագործոն մոդելի արդյունքների հիման վրա:

Դիտարկված 18 նշանակալի փոփոխականների շեմային ազդակների և ազմուկ/ազդանշանի ուսումնասիրության արդյունքում, առանձնացվել են այն ցուցանիշների համախումբը, որոնք տվել են ամենաորակյալ ազդանշանն՝ ըստ ճգնաժամի տեսակների: Այս համախմբի փոփոխականների շեմային մակարդակներից ընտրվել են սահմանային ցուցանիշները (համապատասխանաբար վերևից կամ ներքևից ըստ ազդեցության ուղղության): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՎԱՀ մոդելների մշակման հիմնական նպատակներից մեկը տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշումն է նախքան այդ ճգնաժամերի ի հայտ գալը, ընտրված ցուցանիշների համախմբի համար բացի ճգնաժամերի գնահատված շեմերը, մշակվել է նաև նախազգուշացման հատուկ շեմեր, որի շնորհիվ հնարավոր է ճգնաժամի ի հայտ գալու հնարավորությունը բացահայտել ավելի վաղ ժամանակահատվածներում:

ՎԱՀ մոդելի արդյունքները տեղայնացնելու և կիրառման հնարավորությունը պարզելու նպատակով ստացված շեմային գնահատականների և նախազգուշացման շեմերի շրջանակում ուսումնասիրվել է ԵԱՏՄ անդամ երկրների համար տվյալ փոփոխականների վերջին 4 տարիների վարքագիծը:

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, Կառավարության ընդհանուր եկամուտները, կառավարության ընդհանուր բյուջեի հաշվեկշիռը, համախառն ազգային խնայողությունները, ընդհանուր ներդրումները, կառավարության ընդհանուր կառուցվածքային հաշվեկշիռը, ապրանքների արտահանման և ներմուծման ծավալները, և ավանդների տոկոսադրույքը նշանակալի փոփոխականներ են հանդիսացել ԵԱՏՄ անդամ երկրների համար ազդանշանային մոտեցմամբ ճգնաժամի կանխատեսման համար: Հետևաբար, ԵԱՏՄ պայմանագրով նախանշված տնտեսական կայունության հանձնառության լիարժեք իրացման համար նպատակահարմար է դիտարկել և մշտադիտակել նաև այս ցուցանիշների վարքագիծը: Ավելին, այն փոփախականները, որոնք կառավարելի են պետական քաղաքականության շրջանակներում, կարող են դառնալ նաև օրենսդրական մակարդակում սահմանված շեմային մակարդակներ, ինչպիսին օրինակ գործում է պարտք/ՀՆԱ հարաբերակցության դեպքում:

Աղյուսակ 4: Ազդանշային մոտեցման ՎԱՀ համակարգի նշանակալի փոփոխականների համախումբը և անդամ երկրների ցուցանիշների վարքագիծը¹⁶

| Երկիր | Տարեթիվ | Կարավորության ընդհանուր եկամուտներ/ՀԱԱ | Կարավորության ընդհանուր բյուջեի հաշվեկշիռ | Համախառն ազգային եկամուտ/ՀԱԱ | ընդհանուր ներդրումը/ՀԱԱ | Ապրանքների արտահանման աճ, % | Ապրանքների ներմուծում աճ, % | Ավելանալի տոկոսաբաժնի (%) |
|------------------------------|---------|--|---|------------------------------|-------------------------|-----------------------------|-----------------------------|---------------------------|
| Շենային մակարդակ | | 21,9 | (2,9) | 11,9 | 16,2 | (0,2) | (17,5) | 17,0 |
| Լախագրությունների հատուկ շնմ | | 23,2 | 0,1 | 23,4 | 19,8 | 1,6 | (8,5) | 12,1 |
| Ազդանշային ուղղություն | | < | < | < | < | < | < | < |
| Հայաստան | 2018 | 22,3 | (1,8) | 15,4 | 22,4 | 11,0 | 13,6 | 8,7 |
| | 2019 | 23,9 | (1,0) | 19,1 | 17,4 | 21,5 | 12,8 | 8,5 |
| | 2020 | 25,2 | (5,4) | 14,7 | 18,5 | (20,8) | (17,8) | 8,1 |
| | 2021 | 24,1 | (4,6) | 12,9 | 16,6 | (3,7) | 1,3 | 8,2 |
| Բելառուս | 2018 | 39,6 | 1,8 | 28,1 | 28,1 | 5,3 | 5,0 | 5,9 |
| | 2019 | 38,3 | 0,9 | 27,2 | 29,2 | (0,2) | 4,7 | 6,5 |
| | 2020 | 35,2 | (2,9) | 27,0 | 27,5 | 0,1 | (9,1) | 6,6 |
| | 2021 | 35,4 | (1,7) | 28,3 | 25,6 | 9,9 | 5,2 | 8,4 |
| Ղազախստան | 2018 | 21,4 | 2,6 | 25,2 | 25,3 | 11,3 | 6,5 | 7,1 |
| | 2019 | 19,7 | (0,6) | 23,7 | 27,6 | 0,3 | 17,3 | 7,4 |
| | 2020 | 17,5 | (7,0) | 25,0 | 28,8 | 0,2 | (23,9) | 7,3 |
| | 2021 | 17,4 | (5,0) | 23,3 | 26,2 | (15,8) | (10,4) | 7,4 |
| Ղրղզստան | 2018 | 32,5 | (0,6) | 15,8 | 27,9 | 1,7 | 12,3 | 2,4 |
| | 2019 | 32,5 | (0,1) | 14,7 | 26,5 | 7,3 | (3,6) | 1,5 |
| | 2020 | 30,8 | (3,3) | 23,5 | 18,7 | (10,1) | (21,6) | 1,4 |
| | 2021 | 34,0 | (0,4) | 16,8 | 25,5 | 18,0 | 23,6 | 1,3 |
| Ռուսաստան | 2018 | 35,5 | 2,9 | 28,9 | 21,9 | 4,2 | 2,1 | 5,4 |
| | 2019 | 35,7 | 1,9 | 26,5 | 22,7 | (3,0) | 3,0 | 5,4 |
| | 2020 | 35,3 | (4,0) | 25,8 | 23,4 | (1,5) | (3,3) | 3,8 |
| | 2021 | 36,7 | 0,8 | 29,3 | 22,4 | 0,5 | 14,7 | 3,8 |

Ստացված արդյունքները կարող են արժեքավոր հենք լինել ինչպես ինտեգրացիոն միավորման, այնպես էլ անդամ երկրների քաղաքականություն մշակողների համար, որպեսզի նախագծվեն կանխարգելիչ միջոցառումներ՝ մեղմելու ճգնաժամային իրավիճակի զարգացման հնարավոր հետևանքները:

Տարածաշրջանում կամ գլոբալ մակարդակում անկայունությունների և անորոշությունների շարունակական աճը խոցելի է դարձնում համաշխարհային տնտեսության և առանձին տնտեսական միավորումների դրական զարգացումների հեռանկարները: ԵՄՏՄ անդամ երկրներում արձանագրված տնտեսական ճգնաժամների տեսակների և ժամանակագրության ուսումնասիրությունը փաստում է, որ տնտեսական զարգացման համանման ճանապարհ ունենալով հանդերձ այդ երկրների տնտեսական ցիկլերը պարունակում են ինչպես ընդհանրություններ, այնպես էլ շեղումներ: Մասնավորապես, անկախությունից ի վեր Միության անդամ երկրներում արձանագրվել են արժույթային, բանկային, պարտքային, պարտքի վերակառուցման, «կտրուկ կանգի» ճգնաժամեր, այդ թվում, ԵՄՏՄ անդամ բոլոր երկրներում տեղի են ունեցել արժույթային, բանկային և «կտրուկ կանգի» ճգնաժամեր, մինչդեռ պարտքային ճգնաժամ եղել է միայն Ռ-Դ-ում, իսկ պարտքի վերակառուցման ճգնաժամ տեղի է ունեցել Ռ-Դ-ում և ՀՀ-ում: Ըստ էության, տնտեսական ճգնաժամերի սկզբնավորման ընդհանրությունները, ինչպես նաև

¹⁶ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՎԱՀ միագործոն մոդելի արդյունքների հիման վրա:

դրանց զարգացման վարքագիծը պարունակում են բազմաթիվ նմանություններ և ընդհանուր գծեր, որոնք ստեղծում են կարևոր նախադրյալներ և հիմք ինտեգրացիոն միավորման շրջանակներում տնտեսական ճգնաժամերի ՎԱՀ մոդելների մշակման համար: Զգնաժամերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես ինտեգրացիոն միություններում հակաճգնաժամային միասնական քաղաքականությունը պետք է մանրամասն ներառի բոլոր արտաքին սպառնալիքները և ներքին խոցելիությունները, որոնք կարող են ի հայտ գալ նման իրավիճակներում:

ԵԱՏՄ անդամ երկրների համար ևս գոյություն ունեն ընդհանուր արտաքին սպառնալիքներ և ներքին խոցելիություններ: Ըստ էության, հումք և բնական ռեսուրսներով հարուստ երկրների համար առանցքային հիմնախնդիրներից է պետական բյուջեի եկամուտների դիվերսիֆիկացումը և դրանցից կախվածության թուլացումը. այս հիմնախնդիրը դեռևս հաղթահարելի չէ նաև ԵԱՏՄ անդամ երկրների համար: Ուղղակիորեն, ՌԴ-ի, Ղազախստանի և Արդգատանի տնտեսությունները չափազանց զգայուն են նավթի գնի տատանումների, իսկ ՀՀ տնտեսությունը՝ պղնձի գնի տատանումների նկատմամբ: Այս համատեքստում, ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է արտաքին տնտեսական շուկերի նշանակալի գործոնները և որպես շուկերի աղբյուրներ ԵԱՏՄ երկրների տնտեսության համար առանձնացվել են համաշխարհային ՀՆԱ աճը, հումքային ակտիվների (նավթ, մետաղներ և պարեն) գները, ինչպես նաև միջազգային ֆինանսական շուկայի պայմանները: Գրականության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ շուկերը սովորաբար տնտեսությունների վրա ներգործում են առևտրի (արտահանում, ներմուծում) և ֆինանսական (ներդրումների), գնաճի, փոխարժեքի ուղիներով: Կատարված էկոնոմետրիկ վերլուծությամբ պարզվել է, որ ԵԱՏՄ տնտեսության համար էական են ուսումնասիրված բոլոր աղբյուրներից եկող տնտեսական շուկերը, որոնք համար ընդգծվել են փոխանցումային տարբեր ուղիների առկայությունը: Պարզվել է, որ և՛ հումքային ակտիվների գների, և՛ միջազգային ֆինանսական շուկայի պայմանների շուկերը ներգործում են ուսումնասիրված բոլոր ուղիներով, հստակ փոխանցումային մեխանիզմով: Արդյունքում, բոլոր շուկերը ի վերջո ներագրում են տնտեսական աճի տեմպի, ինչպես նաև պետական հատվածի խոցելիություններն արտացոլող՝ կառավարության պարտքի բեռի վրա:

Ինտեգրացիոն միությունում հակաճգնաժամային միասնական քաղաքականությունը պետք է հաշվի առնի նաև արտաքին և ներքին բոլոր ռիսկերը, որոնք կարող են ի հայտ գալ նման իրավիճակներում: Այս իսկ պատճառով իրականացվել է 2016թ. ի վեր ԵԱՏՄ անդամ երկրների համար ռիսկերի գնահատում, որի արդյունքում պարզ է դարձել, որ այս տարածաշրջանում ռիսկայնությունը խիստ բարձր է, իսկ ռիսկերի որոշ տեսակներ ինչպիսին օրինակ ներդրումային ռիսկերն են, այս տարիներին մշտապես բարձր մակարդակի վրա են եղել: Վերջին տարիների իրադարձություններով և մատակարարումների գլոբալ շղթաների խաթարմամբ պայմանավորված էլ ավելի են սրվել տնտեսական ռիսկերի ազդեցությունները: Հետևաբար քաղաքականություն մշակողներն ունեն «տնային աշխատանք»՝ վերանայել ներկայիս տնտեսական անվտանգության համակարգերը և հիմք ընդունելով ճգնաժամերի տեսակներից բխող ռիսկերն ու դրանց միաժամանակյա տեղի ունենալու հավանականությունը՝ մշակել ճգնաժամերի վաղ ազդանշան գործուն և կենսունակ համակարգեր:

Հաշվի առնելով տնտեսական պարբերաշրջաններն ու ճգնաժամերի կրկնման հաճախականությունը, ինչպես նաև ներկայիս անկայունությունները և ճգնաժամային զարգացումները, ՎԱՀ մոդելները կարող են էական նշանակություն ունենալ քաղաքականություն մշակողների համար՝ թույլ տալով բացահայտել տնտեսության խոցելիությունները և ձեռնարկել նախաձեռնող միջոցառումներ՝ ճգնաժամի ռիսկերը նվազեցնելու համար: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ հնարավոր չլինի ՎԱՀ մոդելների կիրառման արդյունքում կանխել ծանր ճգնաժամերը, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել դրանց բացասական ազդեցություններն ու հետևանքները: Կիրառական տեսանկյունից անհրաժեշտ է կատարելագործել գոյություն ունեցող մոդելները և տեղայնացնել տվյալ երկրի կամ տարածաշրջանի տնտեսական կոնյուկտուրային համահունչ: ՎԱՀ մոդելների հնարավորությունների սահմանափակվածությունը հետևանք է այն հանգամանքի, որ մինչև մոդելներում դիտարկվում են հայտնի ռիսկերը, կարող են առաջանալ նորերը, և այս պարագայում կարողությունների սահմանափակությունը պետք է փոխհատուցվի խոցելիությունը նվազեցնելու քաղաքականությամբ:

Ընդհանուր առմամբ, ճգնաժամերի և տնտեսական անկայունությունների շուրջ քաղաքականության խորը ընկալման համար ձևավորվում է նոր մեթոդներ մշակելու պահանջ: Հատկանշական է, որ աշխատանքում իրականացված էմպիրիկ ուսումնասիրության արդյունքում ստացված գնահատականները համահունչ են պատմական զարգացումներին: Իրականացրած շուրջ 110 փոփոխականների շարքերի ուսումնասիրությունից հեղինակը եզրակացրել է, որ ընտրված 18 փոփոխականներից 80-90%-ը ի վիճակի են կանխատեսել ճգնաժամերի տարբեր տեսակներ, իսկ դրանց որոշ մասը նաև կարողանում է կանխատեսել լինել բոլոր տեսակի ճգնաժամերի համար միաժամանակ և տնտեսական կայունության ապահովման համար կարող են համարվել ուղենիշային: Հատկապես ռեցեսիոն ճգնաժամերի դեպքում ՎԱՀ մոդելի աղմուկ/ազդանշանի գործակիցները առավել որակյալ են, ինչը պայմանավորված է միաժամանակ տարբեր ճգնաժամերի համակցված տվյալների առկայությամբ:

Առենախոսության շրջանակներում կատարված գնահատումները և մշակված վաղ ազդանշանի համակարգերը հնարավորություն են տվել արձանագրել մի շարք էական արդյունքներ, որի հիման վրա հեղինակը կատարել է հետևյալ եզրահանգումները և առաջարկությունները:

➤ **Առկա է ԵԱՏՍ հիմնադիր պայմանագրով նախատեսված մակրոտնտեսական կայունությունը բնութագրող ցուցանիշների համախմբի համալրման անհրաժեշտություն:** ԵՏՀ-ն մշտադիտարկում է իրականացնում մակրոտնտեսական կայունությունը բնութագրող ցուցանիշների համախմբի համար, որոնք սակայն ինտեգրացիոն միավորման կազմավորումից ի վեր չեն համալրվել, ինչպես նաև դրանց շեմային մակարդակների փոփոխությունների ևս չեն ենթարկվել, այն պարագայում, որ 2014 թ. ի վեր տեղի են ունեցել տնտեսական առանցքային իրադարձություններ միության անդամ երկրներում: Առենախոսության շրջանակներում մշակված ճգնաժամերի վաղ ազդանշանի համակարգի արդյունքները ցույց են տալիս, որ կառավարության եկամուտները, բյուջեի հաշվեկշիռը, համախառն ազգային խնայողությունները, ընդհանուր ներդրումները, կառավարության ընդհանուր կառուցվածքային հաշվեկշիռը, ապրանքների արտահանման և ներմուծման ծավալները,

և ավանդների տոկոսադրույքը բնութագրող փոփոխականները գնահատվել են որպես նշանակալի ԵԱՏՄ անդամ երկրների համար ազդանշանային մոտեցմամբ ճգնաժամի կանխատեսման համար: Հետևաբար, ԵԱՏՄ պայմանագրով նախանշված տնտեսական կայունության հանձնառության լիարժեք իրացման համար նպատակահարմար է դիտարկել և մշտադիտակել նաև այս ցուցանիշների վարքագիծը: Ավելին, այն փոփոխականները, որոնք կառավարելի են պետական քաղաքականության շրջանակներում, կարող են դառնալ նաև օրենսդրական մակարդակում սահմանված շեմային մակարդակներ, ինչպիսին օրինակ գործում է պարտք/ՀՆԱ հարաբերակցության դեպքում:

➤ Միության շրջանակում տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշան գործուն և կենսունակ համակարգի ներդրում և տնտեսական կայունության մշտադիտարկման գործընթացի հետ փոխկապակցում: Համաձայն բազմագործոն՝ լոգիթ մոդելի կիրառմամբ ստացված գնահատականների, համաշխարհային տնտեսական աճի 1%-ային կետով աճը այլ հավասար պայմաններում նվազեցնում է ռեցեսիայի հավանականությունը 8.1%-ով, իսկ նավթի գնի 1 դոլարով բարձրացումը՝ 3.8%-ով: Ազդանշանային մոտեցմամբ իրականացված գնահատումների արդյունքում բացահայտվել է թվով 18 փոփոխականների շեմային մակարդակները, որոնք ճգնաժամերի տարբեր տեսակների դեպքում վախճամ ազդանշան որակյալ ցուցիչներ կարող են հանդիսանալ: Ստացված արդյունքները կարող են արժեքավոր հենք լինել ինչպես ինտեգրացիոն միավորման, այնպես էլ անդամ երկրների քաղաքականություն մշակողների համար, որպեսզի նախագծվեն կանխարգելիչ միջոցառումներ՝ մեղմելու ճգնաժամային իրավիճակի զարգացման հնարավոր հետևանքները:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Հովսեփյան Մ.**, Տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշան համակարգերի մշակման էվոլյուցիան եւ «սերունդները», «Регион и мир» գիտավերլուծական հանդես 2022-N5, <ՏԴ՝ 338.2; EDN: WHMINQ, Երևան, 2022թ., էջ 96-102, http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2022_5_96_102_.pdf
2. **Hovsepyan Meri H.**, The Essence of Economic Crises and Accumulations of Uncertainties, «Регион и мир» գիտավերլուծական հանդես, 2023, № 1, UDC: 339.9; Երևան, 2023թ., pages 158-164, http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2023_1_158_164.pdf
3. **Հովսեփյան Մ.**, Մակրոտնտեսական կայունության ցուցանիշները ԵԱՏՄ անդամ երկրներում, Գիտական Արցախ, № 1(16), Երևան, 2023, էջ 172-184, <https://artsakhlib.am/2023/05/01/%d5%b4%d5%a1%d5%af%d6%80%d5%b8%d5%bf%d5%b6%d5%bf%d5%a5%d5%bd%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%af%d5%a1%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d6%81%d5%b8%d6%82%d6%81%d5%a1%d5%b6%d5%ab/>, DOI: 10.52063/25792652-2023.1.16-172
4. **Հովսեփյան Մ.**, Տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշան համակարգերի մեթոդական մոտեցումները և միջազգային առկա փորձը,

- «Регион и мир» գիտավերլուծական հանդես, 2022 №6, ՀՏԴ՝ 338.2, էջ 114-121, Երևան, 2022, http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2022_6_114_121.pdf
5. **Hovsepyan M.**, The chronology of economic instabilities of the EAEU countries, MESSENGER OF ASUE 2023.12023, №1. pages 60-71
 6. **Hovsepyan M.**, Early warning system of economic crisis in EAEU: analysis and results, Экономика и предпринимательство //Journal of Economy and entrepreneurship, 2023 Vol. 17, Nom. 5, pages 67-72
 7. **Galoyan D., Hovsepyan M.**, “Transmission mechanisms of economic shocks in the Eurasian Economic Union”, Scopus Indexed, International Journal of Professional Business Review Vol. 8 No. 6 (2023). pages 01-23, DOI: <https://doi.org/10.26668/businessreview/2023.v8i6.2169>

**ВОЗМОЖНОСТИ РАННЕГО ПРЕДУПРЕЖДЕНИЯ ЭКОНОМИЧЕСКИХ КРИЗИСОВ
И ИХ РОЛЬ В ИНТЕГРАЦИОННЫХ ПРОЦЕССАХ (НА ПРИМЕРЕ ЭАЭС)**

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 00.06 - «Международная экономика».

Защита диссертации состоится 29 августа 2023г., в 14⁰⁰, на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего при Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

На современном этапе развития мировой экономики, когда страны находятся в тесных интеграционных отношениях, наряду с увеличением частоты и последствий кризисов, внедрение эффективных систем раннего предупреждения кризисов, в том числе разработка применимых инструментов является задачей повестки дня для лиц, принимающих решения, и лиц, ответственных за сектор. Среди них разработка кризисных моделей отдельными экономистами и международными организациями была частью экономической политики в последние несколько десятилетий, а в последние годы также стала императивом.

В данной работе собраны и обобщены «поколения» моделей раннего предупреждения экономических кризисов, их содержательные отличия и общие тенденции, в том числе возможности реализации средств машинного обучения, эволюция развития методов кризисного анализа, их основные подходы и противоречия, углубленное изучение которых может стать научной основой для их дальнейшего развития и локализации на территории стран-членов ЕАЭС. Учитывая текущие глобальные вызовы, частоту повторения кризисов и сохраняющиеся негативные последствия, вызванные нестабильностью, модели РПК могут иметь важное значение для лиц, определяющих политику, позволяя им выявлять уязвимые места экономики и принимать превентивные меры для снижения рисков кризиса. В этом контексте актуальность темы очевидна и вытекает из императивности современных экономических вызовов.

Цель исследования – выявить возможности раннего предупреждения кризисов на региональном уровне, разработать систему раннего предупреждения кризисов для стран ЕАЭС, а также оценить роль системы раннего предупреждения в интеграционных процессах. Задачи, поставленные в рамках исследования:

- изучить основные причины экономических кризисов в мировой экономике, в том числе в странах-членах ЕАЭС, и пути их передачи.
- выявить внутренние факторы и внешние угрозы экономических кризисов в государствах-членах ЕАЭС,

- на основе международного опыта изучить передовые подходы раннего предупреждения кризисов разных стран и интеграционных объединений,
- выбрать, разработать и усовершенствовать методологию системы раннего предупреждения для государств-членов ЕАЭС, на основе которой разработать систему раннего предупреждения для стран ЕАЭС,
- определить возможность и применимость определения ключевых/значимых экономических показателей на региональном уровне,
- оценить пороговые уровни показателей, свидетельствующие о возникновении экономических кризисов для стран ЕАЭС,
- оценить возможности внедрения разработанной системы раннего предупреждения в государствах-членах ЕАЭС,
- оценить роль системы раннего предупреждения кризисов в государствах-членах ЕАЭС на дальнейших этапах интеграционного развития структуры.

Анализ и изучение актуальных проблем позволили нам выделить представленные ниже прикладные научные результаты, содержащие инновации. В частности:

- Разработан план государств-членов ЕАЭС на 1994-2022 годы. многоэлементная матрица кризисов, отражающая хронологию возникновения валютных, банковских, финансовых, долговых и внезапных кризисов в каждой стране Союза, случаи одновременного проявления и синхронизации кризисов.
- С помощью модели панельной векторной авторегрессии (VAR-векторной авторегрессии) выявлен механизм трансмиссии основных факторов, влияющих на экономику ЕАЭС, и оценено влияние внешнеэкономических шоков на экономику ЕАЭС.
- Для интеграционного блока ЕАЭС разработаны однофакторная (сигнальный подход) и многофакторная (логит-модель) системы раннего предупреждения экономических кризисов, благодаря которым раскрываются возможности и применение раннего предупреждения всех видов экономических кризисов ЕАЭС (валютных, банковских, финансовых, долговых и внезапной
- остановки) были выявлены в процессе.
- В результате эконометрического анализа было выявлено влияние роста мировой экономики и изменения цен на нефть на вероятность возникновения кризиса в государствах-членах ЕАЭС, а также проводились численные оценки влияния и была выявлена совокупность значимых переменных, обеспечивающих высокую предсказуемость кризисов.
- Пороговые уровни для значимых переменных, сигнализирующих об экономических кризисах, оценивались с применением моделей системы раннего оповещения о кризисах, на основе которых также рассчитывались пороговые значения предупреждений.
- Разработан комплекс дополнительных показателей оценки и мониторинга экономической стабильности, которые могут применяться как в процессе интеграции, так и при разработке экономической политики государств-членов.

MERI HOYSEP HOYSEPYAN
POSSIBILITIES FOR EARLY WARNING OF ECONOMIC CRISES AND THEIR ROLE
IN INTEGRATION PROCESSES (EXAMPLE OF THE EAEU)

Abstract of the thesis for receiving the scientific degree of PhD in economics in the field
00.06 - "International Economics"

The defense of the thesis will take place on August 29-th, 2023 at 14⁰⁰ o'clock, at 014
Council of Economics of SCC RA at the Armenian State University of Economics:
128 Nalbandyan Str., Yerevan 0025, RA.

ABSTRACT

At the current stage of the world economy's development, when countries are in close integration relations, along with an increase in the frequency and consequences of crises, the introduction of effective systems for early warning of crises, including the development of applicable tools, is an agenda item for decision makers and those responsible for sector. Among them, the development of crisis models by individual economists and international organizations has been part of economic policy in the past few decades, and in recent years has also become an imperative.

The paper collects and summarizes the "generations" of models for early warning of economic crises, their substantive differences and general trends, including the possibility of implementing machine learning tools, the evolution of the development of crisis analysis methods, their main approaches and contradictions, an in-depth study of which can become a scientific basis for their further development and localization on the territory of the EAEU member countries. Given the current global challenges, the recurrence of crises, and the continued negative effects caused by instability, ERP models can be important for policy makers to identify economic vulnerabilities and take preventive measures to mitigate crisis risks. In this context, the relevance of the topic is obvious and stems from the urgency of modern economic challenges.

The *aim* of the thesis is to identify the opportunities for early warning of crises at the regional level, to develop an early warning system for crises for the EAEU countries, and to assess the role of the early warning system in integration processes. The tasks set within the framework of the study are as follows:

- to study the main causes of economic crises in the global economy, including in the EAEU member countries, and their transmission ways,
- to identify internal factors and external threats of economic crises in the EAEU member states,
- on the basis of international experience to study advanced approaches to early warning of crises from different countries and integration associations,
- to select, develop and improve the methodology of the early warning system for the EAEU member states, on the basis of which to develop an early warning system for the EAEU countries,

- to determine the possibility and applicability of determining key/significant economic indicators at the regional level,
- to assess the threshold levels of indicators revealing the emergence of economic crises for the EAEU countries,
- to evaluate the possibilities of introducing the developed early warning system in the EAEU Member States,
- to appreciate the role of the system of early warning of crises in the EAEU member states at the further stages of the integration development of the structure.

The research and analysis carried out within the framework of the thesis enabled us to receive the following results of innovative significance:

- A plan of the EAEU member states for 1994-2022 has been developed, i.e. a multi-element matrix of crises, reflecting the chronology of the occurrence of currency, banking, financial, debt and sudden crises in each country of the Union, cases of simultaneous manifestation and synchronization of crises.
- Using the panel vector autoregression (VAR-vector autoregression) model, the transmission mechanism of the main factors affecting the EAEU economy was identified, and the impact of external economic shocks on the EAEU economy was assessed.
- For the EAEU integration block, a single-factor (signal approach) and multi-factor (logit model) systems for early warning of economic crises have been developed, due to which the possibilities and application of early warning of all types of economic crises of the EAEU (currency, banking, financial, debt and sudden stop) were identified.
- As a result of econometric analysis, the impact of global economic growth and changes in oil prices on the likelihood of a crisis in the EAEU member states was revealed, numerical assessments of the impact were carried out, as well as a set of significant variables, ensuring high predictability of crises, was identified.
- Thresholds for significant variables signaling economic crises were estimated using crisis early warning system models, from which warning thresholds were also calculated.
- A set of additional indicators for assessing and monitoring economic stability has been developed, which can be used both in the process of integration and in the development of economic policies of member states.

